

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԻ

Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանը

ք.Հրազդան

21.11.2014թ. ժամը 11.<sup>00</sup>

**ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆՆ**

-Մարզի խորհրդի անդամ 67 համայնքների ղեկավարներից 61-ը /ներկա էր Մայակովսկի համայնքի ղեկավարի տեղակալը, բացակայում էին Աբովյան, Նոր Հաճն, Ֆանտան, Գետամեջ, Վերին Պտղնի, Զովունի համայնքների ղեկավարները/

**Մարզի խորհրդի նիստին մասնակցում էին նաև՝**

- Կ. Պապոյան, Կ. Մարգարյան - ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալներ
- Դ. Իվանյան, Ա. Բաղայան - ՀՀ Կոտայքի մարզպետի խորհրդականներ
- Ա. Գևորգյան, Ա. Գրիգորյան - ՀՀ Կոտայքի մարզպետի օգնականներ
- Է. Հովհաննիսյան - ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Վ. Գալոյան - ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
- Հ. Կոստանյան - ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
- Լ. Նահապետյան - ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
- Մ. Եղիազարյան - ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
- Ա. Խաչատրյան - ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
- Վ. Ոսկանյան - ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
- Զ. Բուրուշյան - ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ
- Ա. Պետրոսյան - ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ
- Կ. Թումոյան - ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալ
- Գ. Գրիգորյան - ՀՀ Կոտայքի մարզպետի փրկարարական վարչության պետ

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1.Մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների կանխարգելման նպատակով տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների կողմից տարվող աշխատանքների և խնդիրների մասին

*/գեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետի փրկարարական վարչության պետ Գ. Գրիգորյան/*

